ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 60 -Ա

« 22 » Մարտի 2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 8 որոշումը.

2) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 29 որոշումը.

3) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 59 որոշումը.

4) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 80 որոշումը.

5) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 14-ի «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի» կանոնադրությունը հաստատելու մասին N12 որոշումը.

6) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի 2010 թվականի փետրվարի 23-ի N12 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1 որոշումը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/22/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Եղեգնաձոր